ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետն մարտ ամսի վերջերը Բիթլիսի և Մուշի կողմերում քրդերի շարժման մասին լրագիրների հաղորդած լուրերն ի նկատի առնելով՝ բարեհաճեց Կ. Պոլսի ամենապատիւ Տ. Զաւէն պատրիարքին մարտի 28-ին ուղղել հետեւեալ հեռագիրը. «Շուտով մանրամասն զեկուցանել Բիթլիսի, Մուշի հայերի վիճակի մասին, լրագիրներում յուզիչ լուրեր կան»։ Վեհափառ Հայրապետի Դիւանից հեռագրուած է Բիթլիսի և Մուշի առաջնորդներին նոյն բովանդակութեամբ։

Տ. Զաւէն Պատրիարքն անմիջապէս հեռաղրով յայտնում է Վեհափառ Հայրապետին հետեւեալը՝ «Բիթլիսում կարգը վերահաստատուած է. Մուշում ոչ մի դէպք չէ եղել. մանրամասնութիւնները նամակով»։

Իսկ Բիթլիսի առաջնորդ Սուրէն ծ. վարդապետն հեռագրել է. «Սոսկալի վտանգէն մասամբ ազատեցանք, մերայինք անվտանգ. պատահաբար երկու վիրաւոր. քրդերը կրնետասնդուին զինուորներէն, գիւղացիների վիճակը մտահոգ, քաղաքն առայժմ հանդարտ»։

Ահա Վեհափառ Հայրապետն ստացել է Ամենապատիւ Պատրիարքի 29 մարտի ներկայ 1914 թ. գրութիւնը՝ որով հաղորդում է քրդերի շարժման մանրամասնութիւնը և Բաղէշի հայերի վիճակը՝ որն և բերում ենք այստեղ ամբողջութեամբ։ Մանրամասն զեկուցումն ստացուած է նաև Տ. Սուրէն վարդապետից։

«Այսօր պատիւն ունեցանք ստանալու Ձեր Վեհափառութեան ուղղած երէկուան թուականաւ հեռագիրը, որով կհրամայէր մանրամասն տեղեկութիւն հաղորդել Բաղէշի և Մուշի հայերու վիճակին վրայ, լրագիրներէն վրդովիչ լուրեր ստացած ըլլալով։

Արդարև Բաղէշի Հայութիւնը բաւական ծանր տագնապէ մը անցաւ վերջերս, այն կողմերը տեղի ունեցած քրդական շարժումի մը հետևանօք, բայց ուրախ ենք յայտարարելու անմիջապէս, որ առ այժմ վտանգը անցած կ՚թուի, ու հանդարտութիւնը վեր-

սկսուած է այն կողմերը, ինչպէս կհաւաստէ մեզ Կայս. Կառավարութիւնը, և ինչպէս կ'յայտարարէ վիճակին Առաջնորդ Տ. Սուրէն ծ. վարդապետ Գալէմեանի մեզ ուղղած վերջին հեռագիրը։

Քրդական այդ շարժումը, որու գլուխ կանգնած են Մոլլա Սէլիմ և Շէյխ Շահապէտտին, շատոնց ի վեր կը պատրաստուէր արդէն Խիզանի մէջ, ու Կառավարութիւնը անտարբեր հանդիսատեսը կըլլար բոլոր այս պատրաստութիւններուն, մինչև որ քիւրդերը համարձակութիւն կստանան մեծ թուով յարձակում գործելու Կուսակալանիստ Բաղէշ քաղաքին վրայ փետրուար 28-ին յանկարծակիի բերելով Կառավարութիւնը, ու կյաջողին գրաւել նոյն քաղաքին մէկ մասը, այլ սակայն ներքին ուժեղ դիմադրութեան և շրջականներէն հասած զինուորական ոյժերու շնորհիւ յարձակողները ի փախուստ կդառնան ցիր ու ցան, որոցմէ ոմանք կսպանուին և ոմանք ալ կձերբակալուին. իսկ Մոլլա Սէլիմ իր քանի մը արբանեակներովը կապաստանի քաղաքին Ռուս Հիւպատոսարանը։ Քրդական առաջին յարձակման պահուն Սուրէն վարդապետի նախաձեռնութեամբ 150-ի չափ պետական զէնքեր կբաշխուին հայերուն ինքնապաշտպանութեան համար։ Բոլոր այս կռիւներուն մէջ միայն երեք հայ զինուորներ կնահատակուին ու մէկ հայ ալ կվիրաւորուի, ինչպէս կիմանանք հեռագիրներէ։

Հարկ է աւելացնել թէ Մոլլա Սէլիմ քաղաքին վրայ յարձակման միջոցին յատուկ գիր ուղղելով Առաջնորդին վստահացուցած է զինքը, թէ հայերուն ոևէ վնաս չպիտի հասնի, վասն զի հայերուն հետ խնդիր չկայ, այլ Կառավարութեան հետ է խնդիրը։ Եւ արդարև քրդական այդ շարժումը ուղղակի Կառավարութեան դէմ պատրաստուած ցոյց մ'էր, որուն նպատակն էր կարգ մը պահանջներ ընդունել տալ Կառավարութեան, բայց թէ ինչ էր այդ պահանջներուն իսկութիւնը տակաւին չ'կրցանք իմանալ ճշդութիւ։

Առ այժմ կ'կարծուի թէ քրդական ապստամբութիւնը զրոսպուած է, ու այն կողմերը հանդարտութիւն կտիրէ, ու Հայերու մասին հոգ պատճառող լուր մը չկայ բարեբաղդաբար, և պիտի ջանանք Ձեր Վեհափառութիւնը իրազեկ ընել հետզհետէ մեզ հասնող նոր տեղեկութեանց։

Իսկ Մշոյ կողմերը այս օրերս ոևէ դէպք պատահած չէ ու հոն կշարունակէ սովորական վիճակը։

Մեր խորին երախտագիտութիւնը յայտնելով Ձեր Հայրական թանկագին հոգածութեան համար։

Մաղթիմք ի համբոյր Օծեալ ս. Աջոյ Վեհի Տեառնդ և Ձեզ ամենախոնարհ մեծարանօք խ. որդի Պատրիարք Հայոց Թուրքիոյ **Զաւէն Արքեպիսկոպոս Տէր Եղիայեան»։**